

- 60 Այլ ըսպատեալ համան հնձոյն
Յոր ի ցորեանց զբոյս թըշնամոյն
Չատեալ կապէր ի խուրձ համբուն
Չոր չար գըտեալ մատնէր հըրոյն :
- 61 Չարբօղս զայն թիւն դեղիւ բուժէր ,
Չահարեկեալս քաջալէրէր ,
Չօտարակուսեալս սերտ անգորէր ,
Եւ զողջամիտս յար երանէր :
- 62 Աղմուկն այսուիկ մերթ հանգարտիւր ,
Այլ ընդ երկար չերբէք տեւիւր
Անգորրութիւն հօտին եւ իւր ,
Վասն այն սիրտըն ճըմէեալ նեղիւր :
- 63 Չի օր քան զօր դաս ներհակաց
Աճէր յանգէտ բիրտ երիցանց
Եւ յաննըշան վարդապետաց
Ի՛ ի սոպո անձանց եւ յիշխանաց :
- 64 Որք վիճէին աղճատելով
Չամունս իւրեանց չիմանալով
Եւ պանծային յխորտալով
Յաղթել ուղղոց անարգելով
- 65 Ո՛վ անիշխան անտէր ազգի ,
Եղո՞ւկ իսպառ այնրմ՝ ցեղի ,
Երբ խռովութիւն նորուն խըմբի ,
Ընդ անուաման համաձայնի :
- 66 Ափսոս քրրտանց ճգանց մեծի
Աքրանաղենաց Լուսաւորչի ,
Եւ քաջ սուրբ հարց մերում սեռի
Հետեւողաց նորուն շաղի :